

ԿԱԼԿԱԹ-ԱՅԻ ՆԱՅՈՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ Տ. ՕՇԱԿԱՆ ՎՐԴ. ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆՆ ԱՅՅԵԼԵՅ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 21-28-ը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանն այցելեց Իրանի Իսլամական Նանրապետություն՝ հանդիպելով Մարդասիրական ճեմարանում սովորող իրանահայ երեխաների ծնողների և հարազարների հետ: Նանդիպումների ընթացքում կառավարիչ Նայր Սուրբը խոսեց յուրաքանչյուր երեխայի ուսման առաջադիմության մասին, ընթերցեց երեխաների մասին ուսուցիչների և պաշտոնեության բնութագրերը՝ անդրադառնալով նաև երեխաների պահվածքին և ճեմարանի մտքակա ծրագրերին: Մեկ անգամ ևս Տ. Օշական վարդապետը շեշտեց, որ նոր դեկավարության նպատակն է ունենալ բարձր կրթական մակարդակ ունեցող դպրոց և բարվոք կենսապայմաններ՝ ակնկալելով ծնողների և հարազարների բարոյական աջակցությունն այս հարցում:

Պաշտոնական այցի ընթացքում Մարդասիրական ճեմարանի կառավարիչը հյուրընկալվեց նաև Իրանի Իսլամական Նանրապետությունում Ն արտակարգ և լիազոր դեսպան Կարեն Նազարյանի կողմից՝ վերջինիս ներկայացնելով ճեմարանի արդի վիճակն ու ապագա ծրագրերը: Նայր Սուրբը հանդիպեց նաև Իրանի Խորհրդարանի երկու հայ պարզամավորների՝ Գևորգ Վարդանի և Ռոբերտ Բեգլարյանի հետ:

Նանդիպումների ընթացքում Տ. Օշական վարդապետին ուղեկցում էր Իրանում Մարդասիրական ճեմարանի պաշտոնական ներկայացուցիչ փար Արարատ Եղիկյանը:

Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը Կալկաթա վերադարձավ իրանահայ հինգ նոր սաների հետ միասին, որոնք համալրեցին 185-ամյա պարմական կրթօջախի աշակերտության շարքերը:

ՂԻՎԱՆ ԿԱԼԿԱԹ-ԱՅԻ ՆԱՅ ՆԱՍՏԱՅՆՔԻ